Հաստատված է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի 8 ապրիլ 2024 թվականին
կայացված թիվ 240408 որոշմամբ

«Տելեկոմ Արմենիա»

Բաց բաժնետիրական ընկերության

ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 3
3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 4

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Շահութաբաժնային քաղաքականությունն իրենից ներկայացնում է «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) շահույթի կառավարման ընդհանուր քաղաքականության մի մասը:

1.2. Սույն քաղաքականությունը (այսուհետ՝ «Քաղաքականություն») մշակված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, Բաժնետիրական ընկերությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ «Օրենք»), Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին, Ընկերության կանոնադրության պահանջներին համապատասխան և սահմանում է Ընկերության շահութաբաժնային քաղաքականության հիմնական սկզբունքները, շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման, շահութաբաժինների հաշվարկման կարգը:

1.3. Շահութաբաժնային քաղաքականությունը հիմնվում է Ընկերության շահութաբաժինների չափերը որոշելիս՝ Ընկերության ֆինանսական կայունության, կապիտալացման և իրացվելիության բարձրացման, Ընկերության և նրա բաժնետերերի շահերի հավասարակշռվածության, ներդրված կապիտալի շահութաբերության ապահովման, բաժնետերերի իրավունքների պաշտպանության վրա:

2. ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունն է:

2.2. Շահութաբաժինները հանդիսանում են Ընկերության զուտ շահույթի (կուտակված շահույթի) մի մասը, որն էլ հետագայում բաշխվում է բաժնետերերի միջև՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին համապատասխան: Հայտարարված շահութաբաժինների վճարումը Ընկերության պարտականությունն է, որի համար Ընկերությունը պատասխանատվություն է կրում շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց առջև ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2.3. Ընկերության տնօրենների Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) տարեկան շահութաբաժինների առաջարկվող չափը որոշելիս հիմնվում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների տվյալներով սահմանված զուտ շահույթի մեծության վրա:

2.4. Ընկերությունը չի երաշխավորում հասարակ (սովորական) բաժնետոմսերով շահութաբաժնի վճարումը:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Ընկերությունը կարող է որոշում կայացնել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

3.2. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշում ընդունելու համար անհրաժեշտ է Ընկերության Խորհրդի առաջարկությունը որը պարունակում է շահութաբաժինների չափերի և դրանց վճարման կարգի մասին տեղեկատվություն:

3.3. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

3.4. Ըստ բաժնետոմսերի տարբեր տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին որոշումը, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի վճարման չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ տնօրենների խորհրդի առաջարկությամբ:

3.5. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող նվազ լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժիններից:

3.6. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

3.7. Տեղաբաշխված յուրաքանչյուր տեսակի (դասի) բաժնետոմսի համար Ընկերությունը հայտարարված շահութաբաժինները կարող է վճարել դրամով կամ այլ գույքով:

3.8. Ընկերության բաժնետերերին շահութաբաժինները դրամով վճարելու դեպքում վճարվում են անկանխիկ ձևով՝ գումարները նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

3.9. Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Ընկերությունը հանդիսանում է հարկային գործակալ՝ բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելիս:

3.10. Բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են՝ դրանցից ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հարկերը նվազեցնելուց հետո:

3.11. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի որոշում կայացնել շահութաբաժինների վճարման վերաբերյալ, եթե.

3.11.1. լրիվ չի վճարվել Ընկերության Կոնոնադրական կապիտալը,

3.11.2. շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
3.11.3. Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,
3.11.4. Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը Օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.

4. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

4.1. Ընկերության կողմից կնքված վարկային պայմանագրերի սահմանափակող դրույթներով պայմանավորված՝ Մինչ 2029թ.-ի դեկտեմբերի 31-ը Ընկերությունը շահութաբաժինների վճարման մասին որոշումները կայացնելու է Քաղաքականության 4.1.1 և 4.1.2 կետերով սահմանված սկզբունքներով։

4.1.1. Ընկերության Կանոնադրությամբ սահմանված «Բ» դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին կարող են շահութաբաժիններ չվճարվել։

4.1.2. Ընկերության Կանոնադրությամբ սահմանված «Ա» դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին մինչև 2029թ.-ի դեկտեմբերի 31-ը վճարված շահութաբաժինների հանրագումարը չպետք է գերազանցի վերջիններիս կողմից ներդրված գումարը։ «Ա» դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին տարեկան շահութաբաժինները կարող են վճարվել միայն այն դեպքում, եթե Ընկերության կողմից ապահովվել են տվյալ տարվա հետևյալ ցուցանիշները.

4.1.2.1. Պարտքի սպասարկման գործակիցը յուրաքանչյուր Հաշվարկային ժամանակահատվածի համար կազմում է առնվազն 1.25:1՝ սկսած 2023թ. հունիսի 30-ին ավարտվող Հաշվարկման Ժամանակահատվածից

4.1.2.2. Զուտ Պարտք/EBITDA հարաբերակցությունը Հաշվարկային ժամանակահատվածում չի գերազանցում 1,5:1 գործակիցը շահաբաժին վճարելուց հետո։

4.1.2.3. Տարեկան շահաբաժնի վճարումը չի կարող ավել լինել քան նախորդ տարվա զուտ շահույթի 20 տոկոսը

4.1.2.4. «Ազատ դրամական մնացորդը» (cash sweep) վճարվում է շահաբաժնի վճարումից առաջ։

4.1.2.5. Առկա չէ «խախտման դեպք» (event of default) համաձայն վարկային պայմանագրի դրույթների։